

F.

Համշէն եւ Սեւ Գետ:

Պարխար լիւրինք, մանաւանդ Տրապիզոնի մօտերէն սկսեալ, շատ բարձր լեռնաշղթայ մը կը դառնան: Ծովեզերքէն մինչեւ լեռանց ջրաբաշխ ողը հազիւ իբր 50 քիլոմետր օդային գծով՝ հսկայ պատուարի մը պէս կ'երեւայ ծովէն, միջին գոնէ 2000 մետր բարձրութեամբ: Արդ Տրապիզոնի եւ Բաթումի գրեթէ մէջտեղ՝ Ռիզէի հարաւարեւելքը, իբր Աթինայի թիկունքը կը բարձրանայ լեռնաշղթային ամենաբարձր գագաթը, հսկայ կոն մը իբր 3700 մետր բարձրութեամբ, որ ծովէն վիթխարի ժայռի մը պէս կ'երեւայ երկար անջրպետ մը: Ասի այսօր ալ պահած է զրուցախառն հայ անունը՝ Բազար, կիպերտի քարտիսի վրայ ալ Katsbgar-Dagh: Ծաւեւ միւս անունը Varsambek օր եւ է «Բէկ»ի հետ գործ չունի. այլ «Վարսամ», աւելի «Վարշամ», տեղական աւանդութեամբ կը կապուի Ս. Վարդանանց նշխարաց հետ: Զրոյցը հիմ ունենայ կամ ոչ՝ պատմական հիմ ունի այն կէտը թէ Աւարայրի ճակատամարտի վերջին դրուագը Հայաստանի այս